Բարև՛, իմ հարևա՛ն,

Ասում եմ հարևան, քանի որ ապրում եմ հայ–ադրբեջանական սահմանից 2 կմ հեռավորության վրա: Անունս Թաթուլ է, 32 տարեկան եմ, մասնագիտությամբ աշխարհագրագետ եմ, ծառայել եմ բանակում:

Չնայած փոքր եմ եղել, բայց հիշում եմ պատերազմը, մութ ու ցուրտ տարիները. օրերով տան նկուղում փակված լինելը, գիշերով ոտքով գյուղից փախնելը, մի խոսքով՝ պատերազմի մեջ է անցել ամբողջ կյանքս մինչև 1994 թ.–ը ակտիվ, իսկ դրանից հետո ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն, որը պակաս վտանգավոր չէ: Յուրդա՛շ ջան, սա պատմում եմ քեզ, որպեսզի իմանաս՝ ով եմ ես, իսկ թե ինչ եմ մտածում, հիմա կասեմ:

Չնայած այս ամենին՝ ես քեզ թշնամի չեմ համարում, այլ՝ մարդ, որը կհամաձայնի ինձ հետ ու այս պահից առանց նախապայմանի, առանց մեղավորներ փնտրելու կմտածի միայն խաղաղության մասին: Ես քեզ խաղաղության ձեռք եմ մեկնում ու առաջարկում փոքր–փոքր քայլեր անել՝ հանուն ապագայի լուսավոր ու խաղաղ օրվա: Սկսե՛նք մեր ընտանիքներից՝ ատելության փոխարեն խոսելով բարեկամությունից: Խոսե՛նք ընկերների հետ պատերազմի փոխարեն խաղաղությունից, խոսենք զենքը գրիչով փոխելու անհրաժեշտության մասին: Բարեկա՛մս, նկատեցի՞ր, որ մենք ունենք մի ընդհանուր նպատակ. դա խաղաղությունն է, և մենք ունենք դրան հասնելու շատ նման մտքեր: Գիտե՞ս, հաճախ եմ լինում Մառնեուլի քաղաքում, որտեղ ունեմ ադրբեջանցի դոստեր. շատ հանգիստ շփվում ենք, առևտուր անում:

Դոստերս ինձ չայ են հյուրասիրում, ես՝ հայկական սիգարետ ու երկար խոսում ենք մեր նմանությունների մասին՝ նման երաժշտություն, կուխնյա, արտաքին տեսք:

Յուրդա՛շ ջան, մի առաջարկ ունեմ. արի՛ հանդիպենք Վրաստանում, նայենք իրար աչքերի մեջ, ձեռք սեղմենք ու խոսենք խաղաղության մասին:

Քո հարևան՝

Թաթուլ